ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IEA7-C52E-47C2-8124 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ՈՐՈՇՈՒՄ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/9946/02/24 ք. Երևան
18 Նոյեմբերի 2025թ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Տ.Գրիգորյանս (այսուհետ նաև՝ Դատարան), ուսումնասիրելով թիվ ԵԴ2/9946/02/24 քաղաքացիական գործը,

ՊԱՐԶԵՑ

Դատարանի (դատավոր՝ Ա. Շիլջյանի) վարույթում է գտնվել քաղաքացիական գործն ըստ հայցի «ԷՄՀԱՐ» ՍՊԸ-ի ընդդեմ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ թիվ ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/225 ծածկագրով ԵՊՀ Ֆիզիկայի ինստիտուտի կարիքների համար անխափան սնուցման սարքերի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ գնման ընթացակարգը 1- ին և 2-րդ չափաբաժինների մասով չկայացած համարելու վերաբերյալ 31.10.2024թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ինչը 21.01.2025թ. վճռով բավարարվել է:

Հիշյալ վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 16.09.2025թ. որոշում է կայացրել հիշյալ վճիռը բեկանելու և գործը նույն դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության ուղարկելու մասին:

Հիշյալ քաղաքացիական գործը մակագրվել և էլեկտրոնային համակարգում հասանելի է դարձել 14.11.2025թ.:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե սույն գլխով առանձնահատկություններ սահմանված չեն, ապա Համակարգի միջոցով իրականացվող գործողությունների վրա տարածվում են սույն օրենսգրքի ընդհանուր կանոնները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանում գործի քննությունը, իսկ վերաքննիչ դատարանում բողոքի քննությունն անցկացվում են դատարանի անփոփոխ կազմով, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի:

Դատարանի կազմը փոխվելու կամ կազմում փոփոխության դեպքում կայացվում է գործը (վերաքննիչ բողոքը) վարույթ ընդունելու մասին որոշում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 5.1դ մասի համաձայն՝ դատարանի կազմը փոխվելու կամ դատական կազմում փոփոխության դեպքում գործը (վերաքննիչ բողոքը) վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը որոշում է կայացնում գործի (վերաքննիչ բողոքի) քննությունն սկզբից սկսելու կամ գործի (վերաքննիչ բողոքի) քննությունն ընդհատման պահից շարունակելու մասին, բացառությամբ առաջին ատյանի դատարանում գործի դատաքննությունն ավարտված լինելու դեպքերի:

Գործի դատաքննությունն ավարտված լինելու դեպքում առաջին ատյանի դատարանը գործը վարույթ ընդունելու հետ միաժամանակ որոշում է կայացնում գործի քննությունն սկզբից սկսելու կամ գործը դատաքննության փուլից վերսկսելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանի եզրափակիչ դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու մասին դատական ակտ կայացնելու դեպքում դատարանը գործն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կայացնում է գործը վարույթ ընդունելու մասին որոշում:

Վերոգրյալի հիման վրա՝ Դատարանը գտնում է, որ քաղաքացիական գործը պետք է ընդունել վարույթ:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ, 188-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑ

«ԷՄՀԱՐ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ թիվ ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/225 ծածկագրով ԵՊՀ Ֆիզիկայի ինստիտուտի կարիքների համար անխափան սնուցման սարքերի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ գնման ընթացակարգը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով չկայացած համարելու վերաբերյալ 31.10.2024թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին քաղաքացիական գործն ընդունել վարույթը:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝
Տիգրան Գրիգորյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am

Digitally signed by GRIGORYAN TIGRAN 4008820477
Date: 2025.11.18 13:36:30 AMT